

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍԻՆԻՍԻ ՏԱՐԻ

# ՄԱՍԻՆ

Հարկան ցինը 10 րուբլի. կէս տարւանը 6 րուբ.  
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Միջոցառում. Тифлисе, Редакция «Маска»

Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆոն № 253.

Զմեռացութիւնը բաց է սեպտեմբերի 10—2 ժամ  
(շաբթի կիրակի եւ անո՞ր օրերից).

Եղանակաբանութիւնը ընդունվում է ամէն լիցւում.

Եղանակաբանութիւնների համար վճարում են

խաւքանդակը տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻՊՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Դերասան Գէորգ Տէր-Դաւթեանցը ցաւօք սրտի յայտնում է իր մօր՝ երէցկին

## ՎԱՐԴԻԹԵՐ ՏԵՐ-ԴԱՎԹԵԱՆՑԻ

մահվան մահին և խնդրում է իր ծանօթներին և բարեկամներին չնորձ բերել յուզարկա-  
ւորութեանը յուլիսի 17-ին, հինգշաբթի, Հալաբար, Լազարեան փող. № 17, սեփա-  
կան տուն, իսկ այստեղից ու Միասն եկեղեցին:

### ՔՐՈՂԱՆԳՈՒԹԻՒՆ

Համայնքի հարցը.— ԴՆԻՔԻՆ, ՏԵՍՈՒԹԻՒՆ.  
Ընդհանուր և ազատագրիչ. Կամակ Ախալ-  
ցխայից. Կերպի լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ, ՏԵՍՈՒ-  
ԹԻՒՆ. Լէմանի ափերից. Սրտագին լուրեր.  
— ԿԵՐԱՊԵՐՈՒՆ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԵՐ.—  
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կաշառված մամուլը Գերմա-  
նիայում:

### ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՐՑԸ

Ո՞րու տնտեսագետներին մէկը, Վոսկրե-  
սէսկի, այս օրերս հրատարակեց սակաւա-  
հոգութեան մասին մի գիրք, որի մէջ այն  
միտքն է յայտնում, թէ ժողովրդի բազմա-  
նալու պատճառով համայնական հողի քա-  
նակութիւնը այնքան սկսում է փոքրա-  
նալ ամեն մի շնչի վրա, որ երկրագործու-  
թիւնը սկսում է դառնալ անձեռնտու  
բոլորի համար, որովհետեւ ոչ ոքի նա չէ  
տալիս այնքան արդիւնք, որ բաւարարու-  
թիւն տայ նրա պահանջներին:

Այդ երևոյթը ճիշդ է արձանագրված.  
բայց այն երկրակցութիւնը, որ անում է  
հեղինակը, անընդունելի է: Մանկանալով  
սակաւահոգութեան դէմ մարտնչել, հեղի-  
նակը առաջարկում է գիւղացիների մի  
մասին տալ շատ հող, իսկ միւսներին զրկել

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

#### ԿԱՇԱՌՎԱԾ ՄԱՄՈՒԼԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՄ

Չափազանց բազմաթիւ են մարդկային քա-  
ղաքակրթութեան վրա ազդող գործոնները,  
որոնց առաջնակարգ չարքին է պատկանում և  
մամուլը՝ իր կոչման բարձրութեան վրա կանգ-  
նած մաքուր ու ազնիւ մամուլը:

Սակայն երբ նա իջնում է այդպիսի բարձ-  
րութիւնից, երբ կորցնում է իր մաքրութիւնն  
ու ազնւութիւնը, այն ժամանակ դառնում է  
կատարեալ չարքը ընթացիկ հասարակական  
կեանքում, մի վտանգաւոր զէնք ճարպիկ ու  
չափաւէր մարդկանց ձեռքում:

Եւ ինչպէս չէ անում այդ զէնքը: Նմուշի հա-  
մար բաւական է իշխել, թէ նա հրքան դատա-  
պարտելի դեր խաղաց տխրահայտ կայսա-  
մայի գործում, թէ ինչպէս հայկական կոտո-  
րածների ժամանակ օտւթեանական ոսկիների  
թելադրութեամբ էր իր ձայնը հնչեցնում, թէ  
ինչպէս երբեմն այս կամ այն ազգեցեկ հոսան-  
քի խաղալիքն է դառնում:

Շատ է խօսվել ու գրվել այդ անդի ու  
անսկզբունք մամուլի մասին, շատ անգամ են  
դատապարտել այդպիսի կաշառվող գործիչներին,  
սակայն չարքը դեռ չէ վերացել: Նա մերթ-  
ընդ մերթ հրապարակ է գալիս այս կամ այն  
երկրում, այս կամ այն վարիագիտով:

Անո մի այդպիսի հարց վերջին ժամանակ-  
ներս մեծ յուզմունք է առաջացրել գերմանա-  
կան մամուլում: Այդ հարցի էութիւնը հետե-  
ւեան է:

Մի ամսից աւելի է, որ դատարանում  
քննվում էր Պոմերանի բանկի գործը: Դատա-  
պարտվում էր այդ բանկի գերակաւոր Բոմբլի-  
նը իր պաշտօնը ի չար գործ դնող, փողեր  
վաճառող անձնատուրութիւն: Գործի քննութիւնն  
այնքան երկար էր, այնքան ձանձրուլի, որ լրա-

հողից, որպէս զի նրանք ստիպված լինե-  
ն գրազրկել ուրիշ արհեստով: Նա առաջար-  
կում է հողաբաժանութիւնը դադարեցնել  
և ամբողջել հողերը այն մարդկանց վրա,  
որոնց ձեռքումն է նա ներկայումս: Այդ-  
պիսով նա ձգտում է ստեղծել մասնաւոր  
սեփականութիւն և վերջ դնել համայնական  
հողատիրութեան:

Մենք առանձին ուշադրութիւն չէինք  
դարձնի Վոսկրեսէսկու աշխատութեան և  
մասնաւորապէս յիշված կէտի վրա, եթէ  
վերջին ժամանակներս ուսուցող բարձր շըր-  
ջանների մի մասում նկատվում էր լինելը  
մի ձգտում սահմանափակել, կամ բոլորո-  
վին ոչնչացնել համայնական հողատիրու-  
թիւնը և սահմանել մասնաւոր հողատի-  
րութիւն: Այդպիսի մտածողները իրանց  
առաջ ունեն մի անխալտ օրինակ արեւմե-  
տեան եւրոպայի, ուր նոյնպէս մի ժամա-  
նակ գոյութիւն է ունեցել համայնական  
հողատիրութիւն և որը սակայն օրէնս-  
դրական կերպով ոչնչացրվել է և վերած-  
վել մասնաւոր հողատիրութեան:

Ճիշդ է, մասնաւոր սեփականութիւնը  
ունի իր որոշ բարեմասնութիւնները, նա  
չափազանց շահագրգռում է հողատէրին  
աշխատելու իր հողի համար և հողի վրա,  
մտնելու բազմապատկազ բարեբոյսներ,  
բայց համայնական հողատիրութիւնը միւս

գիւրները հետզհետէ աւելի ու աւելի քիչ էին  
զբաղվում նրանով, ընթերցող հասարակու-  
թիւնը աւելի ու աւելի քիչ էր հետաքրքրվում:  
Բայց այդ ընդհանուր անտարբերութեան ու  
սառնութեան միջից յանկարծ հնչում է մի սեռ-  
ացիոն լուր և թմրած մաքուր արթնում են,  
մեռած հետաքրքրութիւնը նորից վերականգ-  
նում աւելի մեծ թափով:

Մամուլը կաշառված է. նրա լրագրոյն  
գործիչներից շատերը խառն են Պոմերանի  
բանկի չարաքանութիւն գործին—անա այդ լուրը,  
որ զանազան ձեւերով ու բազմաթիւ ձեւերով  
լցնում է լրագրական երկար էջերը:

Բանկի հաշուապետը քննելիս նկատում  
են փող ստացողների մի երկար ցուցակ՝ զա-  
նազան կեղծ անուններով ու ինքիցիւնով  
գրված: Բայց անել այդ ծածկանունները, ի  
հարկէ, դժուար էր, բայց հասկանալ ամբողջ  
զաղտնիքը—շատ հեշտ: Բոլորի համար պարզ  
էր, որ դա բանկից հօտորար ստացող ժողովու-  
րդաների ցուցակն էր: Մի քանի ինքիցիւններ  
նոյն իսկ հասկանալի են դառնում: Օրինակ  
գրված է հաշուապետը՝ պրոֆեսոր Մ. Բին և  
պարզվում է, որ դա Բերլինի պրոֆեսոր  
Մորից Մէլերն է, որը գրում է լրագրիչների  
առևտրական բաժնուէր Պոմբլոյ լուրերը վեր-  
ջապէս ստիպում են չարաքան պրոֆեսորին  
բացարձակ հրապարակ մտնել «Berliner Tage-  
blatt» թերթում նա ագում է մի նամակ, որով  
ի միջի այլոց առում է.

—«1899 թ. ես կատարել եմ Պոմերանի  
բանկի համար մի քանի աշխատանքներ (?),  
որի համար և ստացել եմ վարձատրութիւն:  
Բայց այդ ժամանակ ես ոչ մի լրագրի առև-  
տրական բաժնի խմբագիր չէի և առհասարակ  
իբրև ժողովուրդս ոչ մի ազդեցութիւն չեմ  
գործել յօգուտ ինչևէ բանի...»

Վարձատրութիւն ստանալ ինչ որ լաւա-  
տանքներ համար և ստորագրել միայն ան-  
ուն սկզբնատուրութիւն—դա ինքն ըստ ինքեան մի  
չարագուշակ խոտովմութիւն էր պրոֆես-  
որին:

կողմից ունի այնպիսի առաւելութիւններ,  
որոնք գերակշռում են այն մի քանի բա-  
րեմասնութիւնները, որ ընծայում է մաս-  
նաւոր սեփականութիւնը: Նոյն եւրոպա-  
յում, ուր վաղուց վերջացել է համայնա-  
կան հողատիրութիւնը, լսվում են գիտնա-  
կան կաթիլաբայից ձայներ, որոնք համա-  
րում են եւրոպայի արածը հողատիրու-  
թեան վերաբերութեամբ մի մեծ սխալ,  
որը յանձնայն գէպս չը պէտք է կրկնել  
այն ազգերը, որոնց մօտ դեռ պահպան-  
ված է գիւղական համայնքը:

Բարեբեկ համայնական հողատիրու-  
թիւնը անհրաժեշտ է, բայց հողատիրու-  
թեան էութիւնը պէտք է մնայ անխախտ  
և անձեռնմխելի:

### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

#### ԱՆՀՐԱԾՈՇՏ ԵՒ ԱՊԱՀՈՎԱԳՐԵԼ

Մեր գաւառական թղթակիցները «Մշակի»  
միջոցով միմիայնակ լուրեր չը հաղորդեցին  
երկրի զանազան կենտրոնների բերքեր նկատ-  
մամբ. երկու երեք համայնական համարեա  
թէ այս էինք կարգում ամենաբարձր թէ՛ առա-  
տեղ կարկուտ եկաւ և բաւականութիւնը ոչնչ-  
ացրեց: Եւ ո՞վ որ ծանօթ է մեր գիւղացիներ-  
ի արդի կացութեան, նրա հանգամանքներին,  
ի հարկէ, անկարող էր սառնութեամբ կարգաւ  
վերոյիշել լուրերը, որովհետեւ այդպիսի  
տարիներն են մեզ այսօրվայ խնդրի գործեան  
մէջ գցել. այդ սովի և քաղցի տարիները:

Չը կայ ոչ մի ընկերակցական կազմակեր-  
պութիւն, չը կայ ոչ մի օգնող ձեռք և գիւղա-  
ցին օտարված է վաշխառուներին դիմելու, ա-  
կամայից նրա գերին դառնալ օտար ազատվե-  
լու համար: Թող ուրախանան հասարակու-  
թեան այդ ցեղերը, որ այս տարի ես հնարա-  
ւորութիւն կունենան իրանց ճիւղաների մէջ  
սօրի կողմից: Բայց հասարակութեանը հետա-  
քրքրում էր ոչ այնքան այդպիսի մտանկի կա-  
շառնութիւնը, որքան այն յուզիչ հարցը, թէ  
մի ամբողջ կողմից հիմնարկութիւն «Բեր-  
լինի մամուլի ակմբանոցն» էլ կաշառված է  
եղել Պոմերանի բանկի կողմից: Անա թէ ինչ-  
պէս:

Դատարանը բանկի հաշուապետը նկատում  
է գրված այդ ակմբանոցի անունով 25,000  
մարկ, առանց մի որ և է գրաւականի և անո-  
րոշ ժամանակով: Նրա հետաքրքրութեանը  
բաւարարութիւն տալու համար դատապարտ-  
ված գիւրեկտորը յայտնում է, որ լսելով թէ  
«մամուլի ակմբանոց» ուղում է օտարական  
տուն չինել և նիւթական միջոց չունի, բանկը  
օգնութեան հասաւ—տունը այդ գումարը, որ-  
պէս զի գրանով գրաւականական յարաբերու-  
թիւններն հաստատել լրագրիչների հետ:

—Ապա անցնէք, ասում է դատաւորներից մէ-  
կը, դա ձեր անձնական նուէրն էր. էլ ինչու  
էիք հաշիւների մէջ գրում...»

—Այս դէպքում ես և բանկը մի և նոյնն  
ենք, պատասխանում է գիւրեկտոր Բէյնսկը, մեր  
նպատակն էր գրաւել լրագրիչները յօգուտ  
բանկի և ոչ յօգուտ մի որ և է անձնատուրու-  
թեան...»

Դրանից յետոյ նախագահը յայտնում է, որ  
այդ հարցի մասին յատուկ նամակ է ստացել  
ակմբանոցի այժմեան նախագահից՝ Լիւդվիկ  
Յուլիանից—(հաշիւաւոր դատաւորից), որը  
զգուշացրել յայտնում է, թէ ոչ ինքն և ոչ էլ  
իր ընկերներից մէկը մի այդպիսի գումար  
երբէք չէին վերցնի, եթէ իմանային նուիրա-  
բերողի յետին մտքերը:

—Միամիտ մարդ է պ. Յուլիան, բացա-  
կանչում է Բէյնսկը, միթէ նա կարծում է, թէ  
եւ 25,000 մարկ տուել եմ նրա գեղեցիկ աչ-  
քերի համար...»

Դրանից յետոյ կարելի է երևակայել այն  
ցնցող տպաւորութիւնը, որ թողնում է գեր-  
մանական աւելի հոշակաւոր դրամատուրգ

սեղմել խեղճ գիւղացիներին, իսկ հասարակու-  
թեան իւրաքանչիւր մի բարեկիցի մտաւոր  
սրբազան պարտականութիւնը պէտք է լինի  
այդ ստուար բանակով տանջվողների ազատու-  
թեան համար մտածել:

Եթէ կայ մի ձեռնարկութիւն, որը ամենից  
շատ է ընդթեան արհաւիրքներին ենթարկվում,  
դա գիւղատնտեսականն է. այս տարի ցուրտն  
է բաւականութիւնը ոչնչացնում, միւս տարին  
խիտ տաք և չորային եղանակները, երբորդ  
տարին կարկուտ, մորիսը և այլն և այլն:  
Այո, գիւղացիները շատ և շատ պատանդների  
են ենթարկվում և նրանց ծով աշխատանքի  
արդիւնքի ոչնչացումն օրակներից է կախված.  
և մեր կարծիքով չէնք այդ է պատճառը, որ  
գիւղական դատակարարը մեր հասարակութեան  
մէջ ամենալիցաւոր, ցաւալաւոր է: Բայց հենց  
այդ գիւղացիներն են մեր արմատը, մեր կեան-  
քի գոյութիւն համար անհրաժեշտ կերակուր  
հայրենիքները և դրա համար էլ մենք պէտք  
է նրանց կրկնակի սիրով պահենք, փայտանք,  
նրանց գոյութիւնը ամուր և բարեք հիմքերի  
վրա դնենք:

Բնութիւն այդ արհաւիրքների դէմ կռուելու  
համար գիտութեան մէջ դեռ ես դրական մի-  
ջոցներ յայտնի չեն: Զիշտ է՝ կարկուտային ամ-  
պերի վրա արձակում են թնդանօթներ, ցրտու-  
թեան դէմ մաքրակուր համար վառում են քա-  
ղոռ (քաղթա) և այլն, բայց դրանք շատ հազ-  
ւագիւտ դէպքերում են միայն ցանկալի ազ-  
դեցութիւն գործում և երբեմն նոյն իսկ աւելի  
ծախք են պահանջում, քան թէ ամբողջ օտա-  
նալիք արդիւնքը:

Սակայն կայ մի այլ խելոցի միջոց, որը  
եթէ ոչ ամբողջովին, գոնէ որոշ չափով գիւ-  
ղացիներին ապահով գոյութեան մէջ է դնում  
բնութեան մէջ տեղի ունեցող այդ յիմար թէ՛  
խելօք պատանդների վերաբերմամբ և դա  
ազատագրութիւնն է: «Մշակ»-ի էջերում պ.  
Քալանթար յաճախ է խօսել այդ նիւթի մասին  
և ցոյց տուել նրա օգտակարութիւնը: Բայց չը

Հերման Զուդերմանի նամակը, որով նա, իբրև  
ակմբանոցի այն ժամանակվայ նախագահ, իր  
չնորհալավութիւնն ու ուրախութիւնն էր  
յայտնել, որ «այս քարափրօտ ժամանակում  
գտնվում են մարդիկ, որոնք իրանց փողը  
տալիս են գաղափարական գործի համար...»  
Այո, ցնցող էր այդ խօսքերը ապաւորութիւնը,  
որովհետեւ չէր կարելի սպասել թէ «Պատիւ»  
պիտի հեղինակը այդպէս հեշտութեամբ գա-  
ղափարական մարդիկ կը համարէ Պոմերա-  
նեան բանկի բաժնետէրերի հաշիւ օրգիւններ  
սարքող, մեծամեծ գումարներ վաճառող գի-  
րեկտորներին...

Եթէ գործերը թանձրացնելու չը լինե՞ր,  
անշուշտ պիտի նկատե՞ր, որ դա Զուդերմանի  
և «Մամուլի ակմբանոցի» կողմից մի սխալ է  
եղել, մի թուրքութիւն, բայց ոչ գիտակցական  
կաշառնութիւն: Սակայն հասարակած իրո-  
ղութիւնն ինքն ըստ ինքեան չափազանց տը-  
գեղ է չափազանց յուզիչ, ուսում հասկանալի  
է գերմանական լրագրիչների բարձրացրած մեծ  
աղմուկն այդ առիթով: Հասկանալի է, թէ ին-  
չու մամուլի լրագրոյն մասը խիտ դատա-  
պարտում է յանցաւորներին, թէ ինչու պորդ-  
ների մի անագին բազմութիւն խիտ պատիժ  
է պահանջում կաշառվող թերթերի ու գրակ-  
ների համար:

Գերմանական թերթերի առելով, «Մամուլի  
ընկերութիւնը» իր կողմից արդէն սկսել է  
քննել այդ աղմկալի գործը և հասարակութիւ-  
նը անհամբեր սպասում է նրա հետեւանքին:  
Այդ քննութեան կէտ նպատակն է լինելու բա-  
նալ կեղծանունները և ինքիցիւնները և հրա-  
պարակ հանել կաշառված թերթերի ու ժող-  
նալիստների անունները: Դրանից յետոյ հա-  
սարակական կարծիքը կը դրոշմէ դրանց  
ճակատին իր ան կնիքը, իբրև նշանացոյց կա-  
տարած և ու մուր գործերի: Իսկ դա բա-  
րոյական մահ է իր կոչման վեհութիւնը հա-  
կացող թերթի կամ գրական գործիչի համար:  
Ե. Բ.



Պատկեր այդ դրական և ինքնին գովելի յայտ  
կուրթիւնները չեն, որ դրդում են մեզ գրի  
վերցնել, այլ մի ուրիշ հանգամանք։ Լեոն XԲ  
սկիզբ դրեց մի նոր շրջանի՝ կաթոլիկութեան  
պատմութեան մէջ։ Ենթարկվելով ժամանակա  
կից գաղափարներին հոռութիւն, նա ժողով  
արդ յահագորդովեց աշխատաստոր ընդհանրու  
թեւն ճակատագրով և իր առաջնակարգ մտա







Электронпечатня Грив. Изд. Т—на, Б.Балканская ул.